

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է Տիգրան Երվանդյանը, դաշնակից զորքերի գլուխ անցած, զրավել Բաբելոնը.

- 1) Ք. ա. 543 թ.
- 2) Ք. ա. 524 թ.
- 3) Ք. ա. 539 թ.
- 4) Ք. ա. 529 թ.

2 Ո՞ր թվականներով են թվագրվում մեզ հասած Վանի թագավորության հնագույն արձանագրությունները.

- 1) Ք. ա. IX դ. 10-ական թվականներ
- 2) Ք. ա. IX դ. 30-ական թվականներ
- 3) Ք. ա. VIII դ. 30-ական թվականներ
- 4) Ք. ա. VIII դ. 10-ական թվականներ

3 Ե՞րբ է Արմինիայի կենտրոն դարձել Պարտավը.

- 1) VII դ. վերջին
- 2) VIII դ. վերջին
- 3) VIII դ. սկզբին
- 4) IX դ. սկզբին

4 Ե՞րբ են հայ-վրացական ուժերն ազատագրել Կարսը.

- 1) 1206 թ.
- 2) 1199 թ.
- 3) 1203 թ.
- 4) 1209 թ.

5 Ե՞րբ են Էմինը և Հերակլ II-ը խրախուսական նամակներ ուղարկել Հռովնանին.

- 1) 1762 թ.
- 2) 1766 թ.
- 3) 1763 թ.
- 4) 1764 թ.

6 Ե՞րբ է սուլթանին հանձնվել Մայիսյան բարենորոգումների ծրագիրը.

- 1) 1895 թ. մայիսի 18-ին
- 2) 1896 թ. մայիսի 11-ին
- 3) 1895 թ. մայիսի 11-ին
- 4) 1894 թ. մայիսի 11-ին

7 Անգլիացիները հայատյաց Խոսրով թեկ Սովորանովին Ղարաբաղի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակեցին՝

- 1) 1919 թ. հունվարին
- 2) 1919 թ. հունիսին
- 3) 1920 թ. հունվարին
- 4) 1919 թ. հուլիսին

8 Ե՞րբ է Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանուն ՄԱԿ-ի ամբիոնից կոչ արել քննարկելու Հայկական հարցը.

- 1) 1965 թ. ապրիլին
- 2) 1967 թ. ապրիլին
- 3) 1967 թ. հունիսին
- 4) 1965 թ. հոկտեմբերին

9 Որտեղից է սկիզբ առնում Արևելյան Տիգրիսը.

- 1) Հայկական պարից
- 2) Ծովք լճից
- 3) Հայկական Տավրոսից
- 4) Խաչափայտի լեռներից

10 Որքա՞ն էր Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվն ըստ «Սարդուրյան տարեգորության».

- 1) 300 հազար
- 2) 250 հազար
- 3) 120 հազար
- 4) 350 հազար

11 Մեծ Հայքի ո՞ր նահանգում էր Ռուտան Հայոց գավառը.

- 1) Վասպուրական
- 2) Այրարատ
- 3) Գուգարք
- 4) Սյունիք

12 Խոսրովանույշ թագուհու հիմնած վանքերն են՝

- 1) Սանահինն ու Հաղպատը
- 2) Հաղպատն ու Գոշավանքը
- 3) Մարմաշենն ու Այրիվանքը
- 4) Գոշավանքն ու Նորավանքը

13 Ո՞վ է նշանակվել Խամսայի մելիքությունների առաջին կառավարիչ.

- 1) Շահնազարը
- 2) Եզանը
- 3) Հակոբանը
- 4) Մելիքօնը

14 Ո՞վ է հիմնադրել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը.

- 1) Արսեն Կրիտյանը
- 2) Խաչատուր Կերեքյանը
- 3) Հակոբ Կալոյանը
- 4) Ներսես Աբելյանը

15 Ո՞վ էր Խորհրդային Հայաստանի Ժողկումխորի առաջին նախագահը.

- 1) Սարգիս Կասյանը
- 2) Աղասի Խանջյանը
- 3) Ասքանազ Մոավյանը
- 4) Ալեքսանդր Մյասնիկյանը

16 Ռազմավարական նշանակություն ունեցող ո՞ր շրջանն էն ազատագրել հայկական զորքերը 1993 թ. ապրիլին.

- 1) Քարվաճառի
- 2) Կովսականի
- 3) Մարտակերտի
- 4) Հորադիզի

17 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

«Գրիգոր Լուսավորիչը «տղայության հասակում» Հայաստանում սովորել է հայոց գիրն ու լեզուն»:

- 1) Բարդածանը
- 2) Ազաթանգեղոսը
- 3) Գևորգ Ասորին
- 4) Մար Աբաս Կատինան

18 Հայոց ո՞ր սպարապետի մասին են ասվել այս խոսքերը.

«Ճերմակաձին զինի արքցէ»:

- 1) Վասակ Մամիկոնյանի
- 2) Վարդան Մամիկոնյանի
- 3) Մանվել Մամիկոնյանի
- 4) Մուշեղ Մամիկոնյանի

19 XX դ. սկզբին Ռուսաստանի հետադիմական վարչակարգի դեմ հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր՝

- 1) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե
- 2) Ինքնապաշտպանության զինվորական խորհուրդ
- 3) Պաշտպանության գլխավոր կոմիտե
- 4) Պաշտպանության պետական կոմիտե

20 Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր՝

- 1) «Ավարտական որոշման արձանագրություն»
- 2) «Երաշխավորիչ որոշման արձանագրություն»
- 3) «Եզրափակիչ որոշման արձանագրություն»
- 4) «Միացյալ որոշման արձանագրություն»

21 Ինչո՞ւ Օրոդես II-ի գլխավորած զինված ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա.

- 1) որպեսզի թույլ չտան Արտավազդի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը
- 2) որպեսզի Անտոնիոսին դիմագրավեն և թույլ չտան մտնել Պարթևստան
- 3) որպեսզի պաշտպանեն իրենց դաշնակից Հայաստանի սահմանները
- 4) որպեսզի ստիպեն Կրասոսին Պարթևստանի դեմ արշավել Հայաստանի տարածքով

22 Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադրությունների պատճառահետևանքային կապերը.

- ա. Երվանդ Սակավակյացը Մարաստանի արքա Կիաքսարի դեմ պատերազմի արդյունքում պահպանել էր իր թագավորությունը, սակայն ստիպված ճանաչել էր մարական գերիշխանությունը:
- բ. XV դ. թուրք-պարսկական պատերազմների հետևանքով մեծ թվով թուրքական ու քրդական ցեղեր ներթափանցեցին Հայաստան:
- գ. Թյուրք-սելջուկների ավերիչ արշավանքների և Բյուզանդիայի վարած քաղաքականության հետևանքով հայ բնակչության մի մասը, արտագաղթելով Հայաստանից, հաստատվեց Կիլիկիայում:
- դ. Առաջին խաչակրաց արշավանքի արդյունքում ստեղծվեց Եղեսիայի թագավորությունը:
- ե. Վարագտիրոց Բագրատունու հեռատես քաղաքականության շնորհիվ Հայաստանը վերականգնեց իր տարածքային ամբողջականությունն ու անկախությունը:

- 1) ա, դ
- 2) ա, զ
- 3) բ, գ
- 4) բ, ե

23 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
- բ. Աղանայի նահանգում 30 000 հայերի կոտորածը
- գ. Անդրեյ Մանդելշտամի կողմից հայկական բարենորոգումների նախագծի կազմումը
- դ. Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը
- ե. ՀՅԴ-ի կողմից երիտրուքերի հետ հարաբերությունների խզումը
- զ. Երիտրուքերի հեղաշրջումը

- 1) զ, ա, բ, ե, դ, գ
- 2) զ, բ, ա, ե, գ, դ
- 3) զ, ա, դ, բ, ե, գ
- 4) ա, զ, բ, ե, դ, գ

24 Անիի Բազրատունիներին ենթակա թագավորությունները դասավորել ըստ դրանց անկման ժամանակագրական հաջորդականության.

- ա. Վանանդի (Կարսի) թագավորություն
- բ. Տաշիր-Զորագետի կամ Լոռու թագավորություն
- գ. Վասպուրականի թագավորություն
- դ. Սյունիքի թագավորություն

- 1) զ, ա, դ, բ
- 2) ա, զ, դ, բ
- 3) զ, ա, բ, դ
- 4) ա, զ, բ, դ

25 Քաղաքների անունները համապատասխանեցնել դրանց վերաբերող բնութագրումներին.

- 1. «այն լի էր զանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով»
- 2. «Հայկական Կարթագեն»
- 3. «գեղեցիկ և շքեղ հորինվածքով»
- 4. «Նոր քաղաք»

- | | |
|----------------|----------------|
| ա. Երվանդակերտ | դ. Արտաշատ |
| բ. Վաղարշապատ | ե. Տիգրանակերտ |
| գ. Բագարան | |

- 1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ
- 2) 1-ե, 2-դ, 3-զ, 4-բ
- 3) 1-զ, 2-բ, 3-ե, 4-ա
- 4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

26 Կատարել համապատասխանեցում.

Թղաքանակ

- 1) 150 000 2) 6000 3) 12 000 4) 8000 5) 18 000

Փաստ

- ա. Հաճըն վերադարձած՝ 1915 թ. տարագրված հայեր
բ. «Հայկական լեզունի» կազմը 1918 թ. նոյեմբեր–դեկտեմբերին
գ. Մարաշում թուրքերի կողմից 1920 թ. սկզբներին կոտորված հայեր
դ. Այնթապ վերադարձած՝ 1915 թ. տարագրված հայեր
ե. Կիլիկիայում 1920 թ. սկզբներին ապրող հայեր
գ. Մինչև 1923 թ. սկիզբը Կիլիկիայից հեռացած ուրֆահայեր

- 1) 1-q, 2-η, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-ե, 2-զ, 3-գ, 4-ա, 5-դ
3) 1-ե, 2-զ, 3-բ, 4-դ, 5-գ
4) 1-ե, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ա

27 Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. XI դարի վերջին Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա պետությունն էր:
բ. Եգիպտոսի հզորացումից ու Երուսաղեմի անկումից հետո խաչակիրների վիճակը խիստ ծանրացել էր:
գ. Խաչակիրներին օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ:
դ. Արքայական թագ ձեռք բերելու գործում Լևոնը բանակցություններ սկսեց Հռոմի պապի և Սրբազն հռոմեական կայսրության կայսր Ալեքսիոս III-ի հետ:
ե. Լևոնի թագադրության հարցով շահազրգոված էր նաև պապականությունը, որը փորձում էր Հայոց եկեղեցին ենթարկել հռոմեական կաթոլիկ եկեղեցուն:

- 1) ա, ե
2) ա, դ
3) բ, զ
4) բ, դ

28 Ե՞րբ է ստեղծվել մանրանկարներով զարդարված և մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը.

- 1) 815 թ.
2) 989 թ.
3) 851 թ.
4) 898 թ.

29 Ե՞րբ է լուծարվել ԱՀԿ-ն.

- 1) 1917 թ. հոկտեմբերին
- 2) 1917 թ. նոյեմբերին
- 3) 1918 թ. մարտին
- 4) 1917 թ. դեկտեմբերին

30 Որքա՞ն էր մայրաքաղաք Տիգրանակերտի բնակչության թիվը.

- 1) շուրջ 100 հազար
- 2) շուրջ 150 հազար
- 3) շուրջ 200 հազար
- 4) շուրջ 120 հազար

31 ԽՍՀՄ կառավարության որոշմամբ՝ 1947 թ. որքա՞ն սփյուռքահայեր պետք է ներգաղթեին Խորհրդային Հայաստան.

- 1) 63 000
- 2) 32 000
- 3) 25 000
- 4) 360 000

32 Ո՞ր աշխատությունում են զետեղված հետևյալ խոսքերը.

«Խիզախությա մը եղեք, եղեք նմանվողներ մեր նախահոր քաջ Արամի որդիներին, որ միզուցե թե այդպիսով կարողանանք վերագտնել մեր հայրենիքն Արարատյան»:

- 1) «Նոր տեսրակ»-ում
- 2) «Որոգայթ փառաց»-ում
- 3) Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ում
- 4) «Հովսեփի Էմինի կյանքը և արկածները» գործում

33 Որտե՞ղ են հնչել այս խոսքերը.

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով, և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղրով հայտնվելով Ադրբեյչանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակչները ... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսքերումը Ադրբեյչանի կազմից»:

- 1) Երևանում՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստում
- 2) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության նիստում
- 3) Սուկվայում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում
- 4) ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նիստում

34

Ընտրել պատմական տերմինների սխալ բացատրությունները.

- ա. Հայասա՝ խեթերեն նշանակում է մեծ երկիր:
- բ. Ուրարտուն Արարատ անվան ասորեստանյան տարբերակն է:
- գ. Թեզարամա երկիրն այդպես է կոչվել Արամ նահապետի հոր՝ Թորգոմի անունից:
- դ. Հունական ավանդության համաձայն՝ Հայաստանի Արմենիա անվանումն առաջացել է արգոնավորդ Յասոնի անունից:
- ե. Տուշպա անունը համարժեք է արդի հայերենի Տոսպ անվանը:
- զ. Հայաստանում I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելենիզմ» անունով:
- 1) բ, դ, ե
 - 2) բ, գ, դ
 - 3) ա, ե, զ
 - 4) ա, գ, դ

35

Որո՞նք էին Բեռլինի վեհաժողովից հայերի խոր հիասթափության պատճառները.

- ա. Արևմտահայությանը մերժեցին ստանալու Ազգերի լիգայի խնամակալությունը:
- բ. Ռուսական զորքերի անհապաղ դուրսերումով բարեփոխումների կենսագործման որևէ երաշխիք չեր մնում:
- գ. Արևմտահայությունը զրկվեց Ազգային ժողով ձևավորելու հնարավորությունից:
- դ. Արևմտահայությունը ստանում էր միայն մշակութային ինքնավարություն:
- ե. Մեծ տերությունները հանդես էին գալիս հայկական բարեփոխումների պահանջներով՝ նպատակ ունենալով զիջումներ կորզել Թուրքիայից:
- 1) բ, ե
 - 2) բ, դ
 - 3) ա, զ
 - 4) գ, ե

36

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Խոսրով I-ի արշավանքը Կովկասի լեռնականների դեմ
- բ. Տրդատ II-ին Հռոմի կայսր Մակրինոսի կողմից թագ ուղարկելը
- գ. Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
- դ. հայոց գահի բռնազավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից
- ե. Կարակալլա կայսեր ուղարկած զորքի շախչախումը և վտարումը Հայաստանից
- 1) ա, զ, ե, բ, դ
 - 2) զ, բ, ա, ե, դ
 - 3) զ, ա, դ, ե, բ
 - 4) զ, ա, ե, բ, դ

37 Հայկական մշակութային կյանքի թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը ըստ Ժամանակագրական հաջորդականության.

- ա. «Ուրբաթագրի» լույսընծայումը Հակոբ Մեղապարտի կողմից
բ. Գլածորի համալսարանի հիմնադրումը
գ. Սմբատ Գունդստաֆլի կողմից նոր դատաստանագրքի կազմումը
դ. Հայկական տպարանի ստեղծումը Նոր Զուղայում
ե. Լվովում տպարանի հիմնումը Հովհաննես Քարմատանենցի կողմից
զ. Արգար Թոխաթեցու կողմից մի շարք գրքերի հրատարակումը Կ. Պոլսում

- 1) ա
2) ե
3) զ
4) դ

38 1915 թ. տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերի դեկավար գործիչների անունները համապատասխանեցնել ինքնապաշտպանության վայրերին.

- | | |
|---------------------------|-------------------------|
| 1. Թաղ | ա. Հայկակ Կոսոյան |
| 2. Վանի Քաղաքամեջ թաղամաս | բ. Մկրտիչ Յոթնեղբայրյան |
| 3. Շապին Կարահիսար | գ. Բաղդիկ Սիմոնյան |
| 4. Մուսա Լեռ | դ. Տիգրան Անդրեասյան |
| 5. Ուրֆա | ե. Հակոբ Կոտոյան |
| | զ. Ղուկաս Տեռվլեթյան |

- 1) 1-զ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-ք
2) 1-զ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-ք
3) 1-ա, 2-ք, 3-ե, 4-զ, 5-դ
4) 1-դ, 2-զ, 3-ք, 4-ե, 5-զ

39 Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռամիկներից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 2) Հայկական բանակում Բագրատունիների օրոք Հայաստանում կազմավորված արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից, լեզվիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 3) Հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 4) Հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը կոչվում էր արքունական գունդ:
- 5) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռազմիկներից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր արքունական գունդ:

40 Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր չեն.

- 1) Ստալինի վարած քաղաքականության արդյունքում ԽՍՀՄ-ում հաստատվեց ամբողջատիրական վարչակարգ:
- 2) Մայիսյան ապստամբության հետևանքը Հ. Քաջազնունու կառավարության հրաժարականն էր:
- 3) Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման հետևանքը էր բնապահպանական խնդիրների առաջացումը:
- 4) Խորհրդային իշխանության վարած հողային քաղաքականության պատճառով 1920-ական թթ. վերջին ՀՍԽՀ-ում հողազուրկ գյուղացիներ այլևս չկային:
- 5) Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման ուղղակի արդյունք էր ճարտարագիտատեխնիկական անձնակազմի թվաքանակի աճը:

41 Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի հիմքում Յոհաննես Լեփսիուսի առաջարկած նախագիծն էր:
- 2) Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Անտանտի երկրները, հաշվի առնելով համաշխարհային առաջարկեմ հանրության կարծիքը և հետամուտ լինելով 1915 թ. մայիսի 11-ի հայտարարությամբ նշված պատասխանատվության հարցում, երիտթուրքերին փոխարինած թուրքական նոր կառավարությունից պահանջեցին բացել դատական գործեր:
- 3) Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջեմս Բրայսը ասում էր, որ հաշտության պայմանագրով հայկական հողերը պետք է վերջնականորեն ազատագրվեն թուրքերից:
- 4) 1919 թ. հունվարին հիմնվեցին ռազմական ատյաններ, որոնք դատական հետաքննության ենթարկեցին երիտթուրքերի կառավարության դեկավարներին, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին, հատուկ կազմակերպության դեկավարներին:
- 5) 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը իրականացրեցին Բեհակդիկին Շաքիրի և Զեմալ Ազմիի մահապատիժը:

42 Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Աղվանքի և Վիրքի հապատակեցումը Տիգրան Մեծի կողմից
- 2) Գողերձ II-ի օսի բարձրանալը
- 3) Էկբատանի գրավումը Տիգրան Մեծի կողմից
- 4) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- 5) Անտիոքի գրավումը Տիգրան Մեծի կողմից
- 6) հայ-հռոմեական պատերազմի սկիզբը

43 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Ի. Պասկեիչի զլսավորած ռուսական ուժերի կողմից Հասան կալայի գրավումը
- 2) Հայկական մարզի ստեղծումը
- 3) Երևանի նահանգի հիմնումը
- 4) Կովկասի փոխարքայության ստեղծումը
- 5) գեներալ Ա. Ճավճավաձեի զորաջոկատի կողմից Բայազետի բերդի գրավումը

--	--	--	--	--

44 Եկեղեցական ժողովները համապատասխանեցնել դրանք հրավիրած կաթողիկոսների անուններին.

- Ա. Հովսեփ Ա. Վայոցձորցի
Բ. Զաքարիա Չագեցի
Գ. Ներսես Մեծ
Դ. Ներսես Բ. Բագրիսանդացի
Ե. Բաբեն Ա.

Ա	Բ	Գ	Դ	Ե

- 1) Շիրակավանի ժողովը
- 2) Դվինի I ժողովը
- 3) Աշտիշատի ժողովը
- 4) Սիսի ժողովը
- 5) Շահապիվանի ժողովը
- 6) Դվինի II ժողովը

45 «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթղթին վերաբերող ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սիսալ է», «Զգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.

- 45.1 Փաստաթղթի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի երրորդ հանրապետություն:
- 45.2 Հոչակագիրը հաստատում էր ՀՀ վճռականությունն Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:
- 45.3 Երկրի տնտեսության հիմքում դրվում էին կոլեկտիվ սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները:
- 45.4 Հոչակագրի մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում պետական լեզվի հիմնահարցին. հանրապետությունում ամբողջ գործավարությունը կատարվելու էր միայն հայերենով:
- 45.5 Հայաստանը պիտի հասներ սեփական դրամական միջոցների ստեղծմանը:
- 45.6 Հայաստանը պետք է ունենար իր մասնաբաժինը ԱՊՀ զինված ուժերի սպառագինությունից:

Բ մակարդակ

46 Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

- ա. Միջնաբերդի շուրջը տարածվող բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
- բ. Շահաստանից դուրս տարածվող քաղաքային թաղամասերը կոչվում էին արվարձաններ:
- գ. Քաղաքի կառավարող մարմինը կոչվում էր մուհթասիբ:
- դ. Հայոց կաթողիկոսի զբաղեցրած գործակալական պաշտոնը կոչվում էր Գերագույն դատավոր:
- ե. Քաղաքի արվարձաններում բնակվողներին անվանում էին ընչազուրկներ:
- զ. Իշխան Դավիթ Սահառունուն Մորիկ կայսեր շնորհած աստիճանը կոչվում էր պատրիկ-կյուրապաղատ:
- է. Մելիքությունները Արևելյան Հայաստանում ուշ միջնադարում ստեղծված հայկական իշխանություններ էին:
- 1) ե, զ, է
2) բ, զ, դ
3) ա, բ, ե
4) գ, դ, զ

47 Ընտրել «Որոգայթ փառաց» գլքում տեղ գտած տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

- ա. Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվելու էր «Հայոց տուն»:
- բ. «Հայոց տունը» պետք է կազմվեր ժողովրդի կողմից նշանակված փոխանորդներից:
- գ. Փոխանորդներից ընտրված տասներեք հոգուց մեկը վիճակահանությամբ դառնալու էր նախարար (նախագահ):
- դ. Նախարարը (նախագահ) նշանակում էր իր տեղապահին՝ փոխարքային:
- ե. «Հայոց տունը» պարտավոր էր ստեղծել հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը:
- զ. Փոխանորդներից ընտրված տասներեք հոգուց տասներկուսը դառնալու էին նախարարի խորհրդակիցներ:
- է. Հայոց թագավորը պետք է նշանակվեր իշխանության ընտրովի բարձրագույն մարմնի կողմից:
- 1) ա, դ, ե
2) բ, ե, զ
3) ա, գ, զ
4) բ, դ, է

48 Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.

- ա. Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները թեև մտան Վանի տերության կազմը, սակայն հարկատու չդարձան:
- բ. Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվեց մեկ պետության մեջ:
- գ. Մենուայի հաղթարշավների հետևանքով Ասորեստանը թուլացավ և, չկարողանալով այլևս վերականգնել իր դիրքերն Առաջավոր Ասիայում, շուտով նվաճվեց Բաբելոնի կողմից:
- դ. Սարդուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու հետևանքով Վանի թագավորությունն սկսեց անցում կատարել դեպի կենտրոնացված պետություն:
- ե. Ռուսա II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանները կրկին հասան Միջերկրական ծովի արևելյան ավազանին:
- գ. Սարդուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց դաշնային կառավարման:
- է. Սարդուրի II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:
- 1) բ, դ, է
2) ա, ե, զ
3) բ, գ, զ
4) ա, ե, է

49 Հայաստանի իշխանությունները Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրին կարևորություն չեն տալիս, որովհետև՝

- ա. այն համարում էին ժամանակավոր:
- բ. երկրի արտաքին քաղաքական գլխավոր նպատակները և Հայկական հարցի լուծումը կապում էին Սևրի պայմանագրի հետ:
- գ. մտածում էին, որ իրենք ստեղծված իրավիճակում այլ ելք չունեն:
- դ. նրանք հասկանում էին, որ Սևրի պայմանագիրը հնարավոր չէ իրագործել:
- ե. համոզված էին, որ Անտանտի տերությունների ջանքերով կիրագործվի Սևրի պայմանագիրը:
- գ. գերազանցած էին Ռուսաստանի դերը տարածաշրջանային խնդիրներում:
- է. համոզված էին, որ դրանով կխոչընդոտեն քեմալա-բոլշևիկյան համագործակցության ամրապնդմանը:
- 1) ա, զ, է
2) ա, բ, ե
3) բ, գ, դ
4) դ, զ, ե

50 Թվարկված ճակատամարտերից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|-----------------|----------------|
| ա. Ներսեհապատի | զ. Զիրավի |
| բ. Քաղիսիայի | է. Ավարայրի |
| գ. Ճարմանայի | ը. Խաղամախյայի |
| դ. Խաղխաղի | թ. Ակոռիի |
| ե. Վարդանակերտի | ժ. Յարմուքի |

- 1) գ
- 2) թ
- 3) թ
- 4) ը

51 1894–1896 թթ. ազատագրական պայքարի իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Շենիկի գյուղապետ Գրգորի տանը ինքնապաշտպանական ժողովի գումարումը
բ. Զեյթունի ապստամբների «Զեյթունի անկախ իշխանություն» վերտառությամբ
կարմիր դրոշ բարձրացնելը թուրքական զորանոցի վրա
գ. Զեքի փաշայի գլխավորած զորքի շարժվելը դեպի Սասուն
դ. Մեծ տերությունների միջամտությամբ Հալեպի հաշտության կնքումը
ե. Կարապետ Բասիլոսյանի կոչը Զեյթունի լեռնականներին
զ. թուրքական կանոնավոր զորքի ու քրդական մազրիկ ցեղի հրոսակների
հարձակումը 1500 վանեցիների վրա՝ Ս. Բարդուղիմեոս վանքից ոչ հեռու
է. Բաքր Ալիի ցույցը
ը. Վանում բոլոր ուժերի միասնական ճակատի կազմումը՝ Ս. Ավետիսյանի
գլխավորությամբ

- 1) դ
- 2) ե
- 3) է
- 4) ը

52 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Զինված ահաբեկիչների ներխուժումը ՀՀ Ազգային ժողով
բ. ՀՀ Սահմանադրության ընդունումը
շ. ԱՊՀ-ի ստեղծումը
դ. ՀՀԿ, ԲՀԿ և ՀՅԴ կուսակցությունների կողմից կռալիցիոն կառավարության ձևավորումը
ե. Շուշիի ազատագրումը ադրբեջանցիներից
զ. Ստամբուլում «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը
է. ՀՀՇ առաջին համագումարի բացումը
ը. Սպիտակի երկրաշարժը
- 1) ը, է, զ, ե, զ, բ, դ, ա
2) ը, է, զ, ե, բ, ա, զ, դ
3) է, դ, ը, ե, զ, ա, բ, զ
4) է, ը, բ, զ, զ, ա, ե, դ

53 Հայոց աստվածների անունները համապատասխանեցնել հունական աստվածների անուններին՝ հելլենիստական դարաշրջանում ընդունված համադրությամբ.

- | | |
|-------------|--------------|
| 1. Ափրոդիտե | ա. Արեգ-Միհր |
| 2. Արտեմիս | բ. Արամազդ |
| 3. Հերակլես | զ. Աստղիկ |
| 4. Հելիոս | դ. Անահիտ |
| 5. Զես | ե. Նանե |
| 6. Ապոլոն | զ. Վահագն |
| | է. Տիր |

- 1) 1-զ, 2-է, 3-զ, 4-ա, 5-է, 6-բ
2) 1-դ, 2-է, 3-ա, 4-զ, 5-բ, 6-է
3) 1-զ, 2-դ, 3-զ, 4-ա, 5-բ, 6-է
4) 1-զ, 2-դ, 3-է, 4-ա, 5-բ, 6-զ

54

Տրված պահանջներից առանձնացնել երեքը, որոնք Վահան Մամիկոնյանը ներկայացրել է պարսից Վաղարշ արքային, և դրանք բավարարվել են վերջինիս կողմից:

- ա. Հայաստանի մարզպան նշանակել միայն հայ նախարարներից
 - բ. չմիջամտել հայ նախարարների ներքին գործերին և պաշտոններ չտալ հավատուրացներին
 - գ. վերականգնել հողեր ժառանգելու՝ իշխանների որդիների և դուստրերի իրավունքը
 - դ. հարգել հայ հողատեր–նախարարների ժառանգական իրավունքները
 - ե. դադարեցնել կրոնափոխության քաղաքականությունը, կրկին թույլատրել քրիստոնեական կրոնի դավանումը
 - զ. մահապատճի ենթարկել հայ ուրացյալ նախարարների պարագլուխ Գաղիշո մաղիսազին
 - է. վերադարձնել Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից բոնագրաված հոգևոր և նյութական գանձերը
- 1) բ, դ, ե
 - 2) ա, դ, զ
 - 3) ա, զ, ե
 - 4) բ, զ, է

55

Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Ռուսական գորքը 1918 թ. փետրվարի 10-ին վերսկսել է պատերազմը Կովկասյան ճակատում:
 - բ. 1918 թ. մարտին կնքված Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի չորրորդ հոդվածով և ոռու–թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ օսմանյան Թուրքիային են անցել Արևմտյան Հայաստանի ազատազրված մարզերը:
 - գ. Անդրկոմիսարիատի 12 կոմիսարներից երեքը հայեր էին՝ Խ. Կարճիկյան, Հ. Օհանջանյան, Գ. Տեր–Ղազարյան:
 - դ. 1918 թ. մարտի 1-ին ստեղծվել է Առանձին հայկական կորպուսը:
 - ե. Հայոց ազգային խորհուրդը 1917 թ. դեկտեմբերի վերջերին Թիֆլիսից Երևան էր գործուղել Արամ Մանուկյանին՝ օժտելով նրան արտակարգ լիազորություններով:
 - զ. Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ե. Գեգեչկորու 1917 թ. դեկտեմբերի 7-ի գաղտնի հրամանի համաձայն՝ սկսվել է նվաճված մարզերի հայ բնակչությունից չորս գնդերի կազմավորումը:
 - է. Հայկական կորպուսի ճակատային և պահեստային գորամասերի կազմավորման գլխավոր վայր էր դարձել Երևանի նահանգը:
 - ը. 1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվել է Անդրկոմկասյան հատուկ կոմիտեի որոշումը Արևմտյան Հայաստանի գրավված տարածքում կառավարման նոր ձև մտցնելու մասին:
- 1) բ, գ, զ
 - 2) գ, դ, է
 - 3) ա, զ, ը
 - 4) դ, ե, ը

56 Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Խորհրդային Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններին է անդամագրվել 1938–1940 թթ.:
- բ. Հակակոլտնտեսային շարժումն արտահայտվեց նաև գյուղացիների կողմից իրենց անասուններն անխնա մորթելու ձևով՝ կոլտնտեսություններին չհանձնելու համար:
- գ. Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառեց հարկերի ավելացման քաղաքականությունը:
- դ. Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու նպատակով խորհրդային իշխանությունը նրանցից խլեց տրամսպորտային միջոցները:
- ե. «Աջերի», տրոցկիստների ջախջախումից հետո ՀամԿ(բ)Կ ստալինյան դեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը:
- զ. Հնչակյան կուսակցությունը, Կոմինտերնի ընդունած որոշման համաձայն, դադարեցրեց իր գործունեությունը արտասահմանում:
- է. Խորհրդային երկրում ձևավորվում էր Ստալինի անձի պաշտամունքը, որը բացահայտ դարձավ 1924 թվականից՝ Լենինի մահվանից հետո:

- 1) ա, դ, ե
- 2) բ, դ, ե
- 3) ա, գ, զ
- 4) բ, զ, ե

57 Կատարել համապատասխանեցում.

Հերինակ

- | | |
|-------------------------|-----------------------|
| 1. Հովհաննես Այվազովսկի | 4. Վարդգես Սուրենյանց |
| 2. Եղիշե Թադևոսյան | 5. Տիգրան Չուխաճյան |
| 3. Գևորգ Բաշինջարյան | 6. Արմեն Տիգրանյան |

Ստեղծագործություն

- ա. «Արշակ Բ»
- բ. «Սևանա լիճ»
- գ. «Դեպի Արագած տանող ճանապարհը»
- դ. «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»
- ե. «Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ»
- զ. «Անուշ»
- է. «Սպասում»

- 1) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ե, 5-զ, 6-ա
- 2) 1-զ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-ա, 6-զ
- 3) 1-բ, 2-ե, 3-զ, 4-զ, 5-ա, 6-ե
- 4) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ա, 6-զ

58 Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

- 1) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր փոխարքա:
- 2) Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանվում էր նահանգների, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից:
- 3) «Սահմանապահ կուսակալ»—ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված գործակալությունների անվանումներից է:
- 4) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին մոզ:
- 5) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:
- 6) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:
- 7) Աքեմենյան տերության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր մարզպանություն:
- 8) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:

59 Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նեպին.

- 1) զյուղատնտեսական մթերքների բոնագրավումների ժամանակավոր դադարեցումը
- 2) մանր և միջին բոլոր ձեռնարկությունների ազգայնացումը
- 3) ազատ առևտորի վերականգնումը
- 4) զյուղատնտեսության կոլեկտիվացումը
- 5) քաղաքի և զյուղի միջև ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը
- 6) հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը
- 7) պարենմասնատրման փոխարեն պարենհարկի կիրառումը
- 8) վարձու աշխատանքի կիրառումից հրաժարումը
- 9) հացահատիկի և այլ մթերքների բոնագրավումների արգելումը

60

Թվարկվածներից որո՞նք են Հայոց մեծ եղեռնի պատճառներ.

- 1) հայերի հայրենազրկման և ոչնչացման ծրագիրը
- 2) Հայկական հարցին մեկրնդմիշտ վերջ տալու երիտթուրքերի ձգտումը
- 3) Միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու ուսուների ծրագիրը
- 4) հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայաստանի միավորման ծրագրի ձախողումը
- 5) հայ արդյունաբերողների և դրամատերերի մրցակցությունից ազատվելը
- 6) հայության ֆինանսական և նյութական ունեցվածքին տիրանալը
- 7) Քառյակ միությանը Անդրկովկասում հավատարիմ դաշնակցից գրկելը

61

Թվարկվածներից որո՞նք են 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հետևանքներ.

- 1) Ռուսական մեծապետական շովինիզմն սկսեց տեղի տալ, վերացավ ոչ ոուս ժողովուրդների ազգային–գաղութային ձնշումը:
- 2) Հայությունը մարտական լուրջ փորձառություն անցավ:
- 3) Հայ հոգևորականության հեղինակությունը աճեց որպես զինված պայքարի կազմակերպիչ:
- 4) Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնականության գաղափարը:
- 5) Ամրապնդվեց հայերի և կովկասյան թաթարների ռազմաքաղաքական դաշինքը:
- 6) Ամրապնդվեց երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:
- 7) Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին:

62

Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) Արտաշես I-ի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի գորավարը ջախջախել է վրացական բանակը և Հայաստանին է վերադարձել Գուգարք նահանգը:
- 2) Պարթևները ոչ միայն չստացան Պոմպեոսի խոստացած տարածքները, այլև Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:
- 3) Տիգրան Մեծի կառուցած «Արքունի պողոտան» միմյանց է կապել Արտաշատը, Տիգրանակերտը և Ալեքսանդրիան:
- 4) Հռոմում ստեղծված Երկրորդ եռապետության անդամներն էին Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը, Մարկոս Կրասոսը:
- 5) Անմնացորդ հայրենանվեր գործունեության շնորհիվ Արտավազդ II-ը պատվավոր տեղ է զբաղեցնում Հայոց պատմության մեջ, դեռևս իր կենդանության օրոք նա հոչակվել է «Աստվածային» պատվանունով:
- 6) Տիգրան III-ի շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց արեց և զահ բարձրացրեց նրա կրտսեր եղբորը՝ Արտաշես III-ին:
- 7) Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատեց Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգեց իր կամակատար Արիոբարզանեսին:
- 8) Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Հուլիոս Կեսարին, որը Հայաստանի թագավոր է հայտարարել Արտավազդ III-ին:

63

Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել հայ-մոնղոլական դաշինքի կնքման հետ կապված բանակցությունների օրակարգում.

- 1) Մոնղոլները համաձայնեցին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 2) Հայերը պարտավորվեցին օգնության խնդրանքով չղիմել Արևմուտքի քրիստոնյաներին:
- 3) Երկու կողմերը պարտավորվում էին պահպանել չեղոքություն երրորդ երկրների հարձակման դեպքում:
- 4) Մոնղոլները խոստացան հոգալ հայոց բանակի պահպանման ծախսերը:
- 5) Մոնղոլները պարտավորվեցին Կիլիկյան Հայաստանին միացնել Աստրիքի մի մասը:
- 6) Հայերի բարեկամությունը շահելու համար մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեղականները խլել էին Կիլիկիայից:
- 7) Մոնղոլները պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:

64

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) ԽՄԿԿ ՀՀ համագումարում «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» գեկուցումով հանդես է եկել Միխայիլ Գորբաչովը:
- 2) «Այլախոհ» հասկացությունը ի հայտ եկավ 1970-ական թթ., որը բնութագրում էր այն մարդկանց, ովքեր պայքարում էին խորհրդային իրականությունը փոփոխելու համար:
- 3) Հայաստանում հակախորհրդային գործունեության մեղադրանքով դատապարտվածների պայքարի հիմնական նպատակն էր հայկական հողերի վերամիավորումը, լեզվի և մշակույթի պահպանումը, կոմունիստների մենիշանության վերացումը, ինչպես նաև անկախ Հայաստանի ստեղծումը:
- 4) Պարույր Հայրիկյանին, Աշոտ Նավասարդյանին և ուրիշներին 1970 թ. ազատազրկման դատապարտեցին այն մեղադրանքով, որ «ակտիվ ընդհատակյա գործունեություն են վարել՝ նպատակ ունենալով անջատելու Հայաստանը ԽՍՀՄ-ից և ստեղծելու անկախ հայկական պետություն»:
- 5) Այլախոհները 1970-ական թթ. կեսերին Հայաստանում ստեղծեցին առաջին այլախոհական կազմակերպությունները:
- 6) 1973 թ. ձևավորված ԱՄԿ ղեկավար մարմինը՝ խորհուրդը որդեգրեց «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով» ռազմավարությունը:
- 7) Մեծ եղեռնի հիմնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղան նաև 1970-ական թվականներին:
- 8) Վերակառուցման շրջանում Խորհրդային Միությունում հետզհետե սրվող ազգային հարցին գործնական լուծում տալու փոխարեն Մոսկվան վարում էր երկդիմի և խուսանավելու քաղաքականություն:

65

Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) քրիստոնեական եկեղեցու «Հավատող հանգանակի» ընդունումը
- 2) մազքուրների ներխուժումը Հայաստան և Վահարշապատի գրավումը
- 3) Սանեսանի պարտությունը Ցլու գլուխ լեռան ճակատամարտում
- 4) Արիստակես կաթողիկոսի սպանությունը
- 5) Դատարեն Բգնունու և Բակուր բդեշխի մահապատիժը
- 6) Վրթանես Ա կաթողիկոսի գահակալման ավարտը
- 7) Շապուհ Ա-ի կողմից պատերազմ սկսելը Հռոմեական կայսրության դեմ և Մծբինի գրավման անհաջող փորձը
- 8) Վաչե Մամիկոնյան սպարապետի և իր զինակիցների նահատակությունը
- 9) Տիրան թագավորի բնակություն հաստատելը Կուաշում

66 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Էրեբունիի հիմնադրումը
- 2) համահայկական երկրորդ թագավորության ստեղծումը
- 3) Խուլանայի և խեթերի թագավորի միջև պայմանագրի կնքումը
- 4) Կարանի թագավորի դիմադրելը խեթերի արշավանքներին
- 5) Վանի տիրակալի հիշատակվելը կիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական զործողություններ ծրագրելիս
- 6) Վանա և Ուրմիո լճերի միջև Արամ անունով երկրի առաջին հիշատակումը

--	--	--	--	--	--	--	--

67 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) հայազգի Իվան Կարապետի ժամանումը Արցախ
- 2) Արցախի անջատումը Գանձակի խանությունից
- 3) Իսրայել Օրու վերադարձը Սպահանից
- 4) Հալիձորի ճակատամարտը
- 5) Մահտեսի Շահմուրատի առաջին հանդիպումը ֆրանսիական արքունիքի հետ
- 6) Եսայի Հասան–Զալալյանի բազմելը Գանձասարի կաթողիկոսական զահին
- 7) Դավիթ բեկի առաջին հաղթական մարտը Չինանշիր կոչվող ցեղի դեմ

--	--	--	--	--	--	--	--

68

Կատարել համապատասխանեցում.

- Ա. Բազրատունիների արքունիքը Կարս տեղափոխած արքան
 Բ. Անիի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետը
 Գ. Սկսուայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը
 Դ. Սասուն-Խութ գավառում VIII դ. կեսի ապստամբության դեկավարը
 Ե. Գոշավանքի նշանավոր խաչքարագործ վարպետը
 Զ. Հոռմկլայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը
 Է. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը

- 1) Սարգիս Պիծակ
- 2) Մանուել
- 3) Թորոս Ռոսլին
- 4) Տրդատ
- 5) Պողոս
- 6) Հովհան
- 7) Արաս
- 8) Գրիգոր Մլիճեցի

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69

Կատարել համապատասխանեցում.

- Ա. Հայկանուշ Դանիելյան
 Բ. Հասմիկ
 Գ. Համբարձում Քեշեկ
 Դ. Սերգեյ Մերգելյան
- Ե. Արա Սարգսյան
 Զ. Լևոն Ռոտինյան
 Է. Հովհաննես Կարապետյան

- 1) Երգիչ
- 2) քիմիկոս
- 3) մաթեմատիկոս
- 4) պատմաբան
- 5) բժիշկ
- 6) դերասան
- 7) երկրաբան
- 8) քանդակագործ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

- 70.1 Հայ առաջին քաղաքական լրագիրը «Ազատության ավետարերն» է, որը տպագրվել է «Հայրենասերների միություն» կազմակերպության կողմից:
- 70.2 Առաջին հայ պարբերականը «Ազդարարն» է, որը հրատարակվել է Կալկաթայում:
- 70.3 Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետը Հ. Օհանջանյանն էր:
- 70.4 Առաջին հայ ազգային կուսակցությունը ստեղծվել է հայրենի հողի վրա՝ Վանում:
- 70.5 Կովկասյան ճակատում հայկական կամավորական չորս ջոկատներից առաջինը ռազմի դաշտ է մեկնել Դրոյի ջոկատը:
- 70.6 Առաջինը ստեղծվել է Արևմտահայերի ազգային խորհուրդը, հետո՝ արևելահայերի Հայոց ազգային խորհուրդը: